Պատմութեան թանգարանի քարտէզինը (որը դաշտը Մակու-չայի ստորին հոսանքում է նշում)[22], ինչից յետոյ կանգ է առնում Ս. Երեմեանի տեսակէտի («Մակուից հարաւ, Ղարաքիլիսայի շրջակայքում») քննադատութեան վրայ՝ փորձելով մատնանշել ինչ-ինչ փաստարկներ, սակայն զարմանալիօրէն բոլորն էլ՝ ակնյայտ սխալ[23]: Օր.՝ որ իբրեւ թէ Ս. Թադէի ձորահովիտը հեռու էր հնում յայտնի մեծ ճանապարհներից (՞), կամ՝ որ վանքից հարաւ ընկած ընդարձակ «Շաւարշականի սարահարթով» հոսող Մակու-չայ գետն իբրեւ թէ փոքր է՝ Աւարայրի դաշտի Տղմուտը համարուելու համար (՞): Այդ կերպ է նրան հեշտ թւում ընթերցողին մատուցել Կոտորի Աղ-չայ վտակի ափերին, այսինքն՝ Արտազի սահմաններից դուրս ընկած Ղարազիադինի դաշտի տարբերակը: Անշուշտ, աղբիւրագէտն իրաւունք չունի այդ աստիճան անտեսել մատենագրական ուղիղ տեղեկութիւնները Աւարայրի՝ Արտազ գաւառում գտնուելու մասին, բայց բառացի հէնց դա է անում Հ. Աղաբէկեանը՝ գրելով. «...դաշտը պէտք է գտնուի կա՛մ Հերի եւ Զարեւանդի հիւսիսային մասում, կա՛մ էլ Ճուարշ-ռոտում, իսկ քանի որ նշուած վայրերում միայն մէկ գետ կայ՝ Աղ-չայ գետը, հետեւաբար եւ Աւարայրի դաշտը պէտք է այստեղ գտնուի»[24]: Թէպէտ՝ յանուն արդարութեան նաեւ նշելի է, որ Արտազի յիշատակումների նմանատիպ անթոյլատրելի անտեսման վրայ է հիմնուած Աւարայրի տեղորոշման տարբերակների կէսից աւելին (7-8-ը):

1988 թ. Հ. Աղաբէկեանի տեսակէտը հիմնաւորապէս քննադատուեց Հմ. Մարտիրոսեանի կողմից[25], սակայն չնայած դրան՝ ներկայումս այն ամենից շրջանառուն է դարձել: Կարծում ենք, որ դրա պատճառը խիստ պարզունակ է. Հ. Աղաբէկեանի վարկածը հասցրել է թափանցել մի շարք ընդհանրացնող գործեր՝ «Հայկական սովետական հանրագիտարան», «Հայկական համառօտ հանրագիտարան»)[26] ու «Հայաստանի եւ յա-

---

[22] Նոյն տեղում, էջ 97:

[23] Նոյն տեղում, էջ 97-98:

[24] Նոյն տեղում, էջ 113: Հմմ. Մարտիրոսյան 1988, 82-83:

[25] Մարտիրոսյան 1988, 83-85: Ցաւօք, այդ հիմնաւոր քննադատութիւնից յետոյ հեղինակը փորձում է Աւարայրի դաշտը տեղադրել Մակու-չայ գետի ձախ վտակ Ղարասուի (նաեւ՝ Աղ-չայ, Աւաջիկչայ՝ ակունքը Վասպուրականի լեռներում, գետաբերանը՝ Մակու քաղաքից մի փոքր արեւմուտք) հովտի Օվաջիք գաւառակում՝ Քիլիսաքենդ գիւղի շուրջը, որի միջով անցնում է Խոյ – Ղարաէյնի – Բայազէտ վերոնշեալ ուշմիջնադարեան մայրուղին: Բայց չէ՞ որ այդ շրջանը մաս էր կազմում ոչ թէ **Արտազի**, այլ նրա արեւմտեան հարեւան **Մարդաստան** գաւառի:

[26] Տե՛ս Հ. Աղաբէկեանի՝ «Աւարայր [գիւղ]» եւ «Աւարայրի ճակատամարտ 451»՝ արդէն յետմահու յօդուածները «Հայկական սովետական հանրագիտարա-